



ՂԱԶԱՐԱՅԱՆ ՄՈՎՍԵՍ

ԱԿՆԵՐԻ ԳՐԱԴՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՅԸ

(Ավարտական շարադրության թեզերը)

1. «Ակների գրչության դպրոցը» անմշակ թեմա չէ: Այդ դպրոցի մասին ընդարձակ ուսումնասիրություն ունի Հ. Ղ. Ալիշանը «Սիսուան»-ի մեջ (էջ 153—156): Վերջին ժամանակներս սովետական մեր հայագետներից նրա վրա կանգ է առել դոց. Հ. Ժամկոչյանը՝ «Պատմութիւն վասն ազգին նետողաց»-ի հեղինակի հարցի պարզաբանման առնչությամբ (տես Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատոր XXIII, էջ 367—368): Վերջին տարիներս գրչության այդ դպրոցի վրա կանգ են առել նաև Նորայր Եպիսկոպոսը «Սիսուան»-ում և Հ. Ն. Ակինյանը «Հանդէս ամսօրեայում»: Ավարտական ներկա շարադրության մեջ օգտագործելով նշված աշխատությունները, ջանացել ենք Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրաց հիշատակարանների հիման վրա որոշ լրացումներ և պարզաբանումներ անել:

2. Հայտնի է, որ XI դարում, Վասպուրականի, Անիի և Կարսի թագավորությունների անկումից հետո, Հայաստանում ստեղծված անտանելի վիճակից հարկադրված, հազարավոր հայեր գաղթեցին դեպի Արևմուտք և հաստատվեցին Կապադոկիայում, Միջագետքում և Կիլիկիայում: Հայկական այդ գաղութներից առանձնապես քաղաքական աչքի ընկնող դեր ունեցավ Կիլիկիան, որը գտնվելով առևտրական և ռազմական ճանապարհների խաչաձևման հանգույցում, տրեսեսական արագ վերելք ապրեց: XI դարի ութսուական թվականներին Ռուբեն իշխանի ջանքերով հիմնվեց Կիլիկիայի հայոց իշխա-



նությունը, որը հետագայում ավելի ուժեղացավ և վերածվեց թագավորության (Կիլիկիայի հայոց առաջին թագավորը՝ Լևոն I, դահբարձրացավ 1198 թվին): XIII—XIV դարերում հայ մատենագրությունը, աշխարհիկ և հոգևոր իշխանության հովանավորության տակ, անախարհաց շափով զարգացավ և ծաղկեց Կիլիկիայում: Հիմնվեցին գրչության մի շարք դպրոցներ, որոնցից առանձնապես աչքի ընկնող դեր ունեցավ Ակները:

3. Ակների վանքը հիմնել է Լևոն I թագավորը 1190—1198 թվերի ընթացքում, իսկ դրանից առաջ գոյություն է ունեցել Առաքելոց անունով հայկական վանք և միաբանություն: 1215 թվից մենք ունենք գրչության այդ դպրոցից մեզ հասած արդեն առաջին ձեռագրերը:

4. Ականց անապատը կամ Ակների վանքը գտնվում է Կիլիկիայի Արևմտյան սահմանի վրա, Ցախուտ գավառում, Անդրունի բերդի մոտ («Սիսուան», էջ 153), Պարատիս գետի ափին («Պատմութիւն ազգին Ռուբինեանց», տե՛ս «Մամուլ Անեցու ժամանակագրութեան» հավելվածը): Վանքն իր անունը ստացել է հարևան Ակներ գյուղից, ուր գտնվում են բազմաթիվ արկածաբարություններ:

5. Լևոն թագավորը, ինչպես և նրա հաջորդները, Ականց անապատի վրա նախել են որպես իրենց անձնական հովանավորության տակ ընկնող վանքի, նվիրել են կալվածներ և նյութական լաճն աջակցություն ցույց տվել նրան:

Որպես արքունական վանք, այնտեղ է

թաղվել Լևոն I-ի սիրտը և փորոտիքը, այնտեղ է կրոնավորել Հեթում թաղավորը քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո (տե՛ս «Պատմութիւն ազգին Ռուբինեանց»), այնտեղ է թաղվել վասակ արքայի շարքը (տե՛ս «Արարատ», 1898, էջ 210) և այլն:

6. Ակնանց անապատը, կիրակոս Գանձակեցու վկայությամբ, խոտակյաց միաբանական կարգ է ունեցել (տարվա բոլոր շաբաթների 5 օրերը պահճ են պահել և պահքը լուծել միայն շաբաթ և կիրակի օրերը): Վանքի միաբանները մատենագրական լայն աշխատանք են ծավալել (այս մասին վկայում է կիրակոս Գանձակեցին): 1215 թվին արդեն Պետրոս Գրիշը Ակնեի անապատն անվանում է «գերահռչակ», իսկ այնուհետև հաճախ է հիշվում՝ «անձ և հռչակաւոր», «հոյակապ և ականաւոր» և այլ բարձր վերադիրներով:

7. Իր գոյություն մոտ 120 տարիների ընթացքում Ակնեի դպրոցն ունեցել է իր դժվարությունները — կոռուպցիոն է, նյութական խեղճություններ է ունեցել, սակայն նա երբեք չի դադարեցրել ստեղծագործական իր աշխատանքը: Ակնեում գրված ձեռագրերն առանձնապես շատ են 1310—1330 թվերից:

8. Ակնեի գրությունն դպրոցից մեզ է հասել պատմական մի կարևոր աշխատություն, այդ «Պատմութիւն ազգին նետողացն» է, որի հեղինակն է համարվել առաջներում Վարդանը, հետո՝ Մաղաքիա արեղան: Վերջերս, դոց. Հ. Ժամկոչյանն իր մի ուսումնասիրության մեջ համոզեցուցիչ փաստերով ցույց է տվել, որ այդ պատմության հեղինակը Վարդան պատմիչն է: Ըստ տեղեկությունների, Ակնեում է գրվել նաև Ներսես կաթողիկոսի պատմությունը, որի հեղինակը մեզ հայտնի չէ: Ակնեից տվել է նաև մի տաղերու՝ Հովհաննես Ճյուղ վարդապետը, որը թողել է մի բանաստեղծություն՝ «Գրիգորիոս Լուսաւորիչ Հայոց» վերնագրով:

9. Ակնեի գրության դպրոցը մեկուսացած, կղզիացած չի եղել հայ գրության մեջ դարձվող հայկական մյուս դպրոցներից: Տեղեկություններ կան, որ նա սերտ հարաբերություններ է ունեցել առանձնապես Ավագ անապատի, Խորանշատ վանքի, Անդրունի բերդի, Երուսաղեմի, Խոշակա ուխտի և դրությունների այլ օջախների հետ:

10. Ակնեի վանքը տվել է բազմաթիվ շնորհալի գրիչներ, որոնք գրել, ընդօրինակել են հնից եկած ձեռագրերը: Մեզ հայտնի են հետևյալ գրիչները (բերում ենք ժամանակագրական կարգով).

I. ՊԵՏՐՈՍ ԳՐԻՉ, եղբայր Սիմոնի. — 1215 թվին արտագրել է Ճառք Սեբեռիանոսի (Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 947) և Յաֆաթապատում (Գարեգին

Կաթողիկոսի Հիշատակարանների ժողովածու, 1-ին հատոր, էջ 775—776):

II. ԳՐԻԳՈՐ ԳՐԻՉ կամ ՊԱՏՄԻՉ. — 1273 թվին վանահայր Ստեփանոսի պատվերով արտագրում է Ժամանակագրություն Միխայելի պատրիարքի Աստուց, որի վրա ավելացնում է 44 տարիների պատմություն, Պատմություն վասն ազգին նետողաց վերնագրով:

III. — ՊՈՂՈՍ ԳՐԻՉ. — Արքայականիում արտագրել է մի ձեռագիր (Արտավազդ արքայի սկզբնական Սյուրմեյան, Մայր ցուցակ Երուսաղեմի ձեռագրաց, ձեռ. № 89):

IV. — ՀՈՎՀԱՆՆԵՍ ԸԼՈՒՉ. — Գրել է մի բանաստեղծություն՝ Գրիգորիոս Լուսաւորիչ Հայոց վերնագրով (Ալիշան, «Միստան», էջ 153—156):

V. — ԳՐԻԳՈՐ ԳՐԻՉ. — 1311 թվին արտագրել է մի Անետարան (Փրդալեմյանի ձեռագրաց հիշատակարանների ժողովածու, Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 6263):

VI. — ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ. — 1312 թվին արտագրել է մի Շարակնոց (Բրիտանական թանգարանի ձեռագրաց ցուցակ, ձեռ. № 46, (18.603):

VII. — ԳՐԻԳՈՐ ԳՐԻՉ. — 1313 թվին արտագրել է մի ժողովածու հաղից (Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 821):

VIII. — ՆԵՐՍԵՍ ԳՐԻՉ. — 1313 թվին արտագրել է մի Անետարան (Տեր-Ավետիսյան, 3ուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի, անտիպ, էջ 142):

IX. — ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻՉ. — 1313—1315 թ. թ. (Կոնիերի ցուցակ, էջ 95):

X. — ՊՈՂՈՍ ԳՐԻՉ. — Գլածորի վանքում արտագրել է մի Անետարան (Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 9150):

XI. — ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉ, եղբայր Բարսեղի. — 1319 թվին արտագրել է Մատենա ռդերգութեան Գրիգորի Նաբեկացոյ (Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 3589):

XII. — ՄԻՆԱՍ ԳՐԻՉ. — 1322 թվին ընդօրինակել է մի ժողովածու (Սըրվանձոյան, Թորոս աղբար):

XIII. — ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉ. — 1323 թվին ընդօրինակել է մի Անետարան (Վիեննայի ձեռ. № 342, Տաշյանի ձեռագրաց ցուցակ, էջ 885):

XIV. — ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉ. — 1324 թվին ընդօրինակել է մի Անետարան (Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 8187):

Հիմք չկա վերև հիշված Վարդանները նույն անձնավորությունը կարծելու:

XV. — ԴԱՎԻԹ ԲՋՆՆՅԻ. — Ընդօրինակել է Ագաթանգեղոսի պատմություն հայոց (Հայկ:

ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 1481):

XVI.— ԳՐԻԳՈՐ ԳՐԻԶ.— 1325 թվին ընդօրինակել է Մեկնութիւն քղբոյն Պապուսի՝ Յովնանու Ոսկեբերանի (Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 1414), և Մեկնութիւն քղբոյն Կողոսացոց՝ Յովնանու Ոսկեբերանի (Տեր-Ավետիսյան, Յուցակ ձեռագրաց նոր-Ջուլայի, անտիպ, էջ 1273—1274), իսկ 1332 թվին Անդրունին բերդում ընդօրինակել է Յովնանու Ոսկեբերանի Մեկնութիւն Յովնանու Աւետարանին (Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 1347):

XVII.— ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՅԻ.— Ընդօրինակել է Ներքող կամ Ճառ խաչին (Սյուրմեյան արքայանի Ձեռագրաց ցուցակ, էջ 156):

XVIII.— ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻԶ.— 1329 թվին արտագրել է մի Աւետարան (Տեր-Ավետիսյան ցուցակ, էջ 148):

XIX.— ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՅԻ.— 1386 թվին այցելում է Երուսաղեմ մի քանի բահանաների հետ, որտեղ իրենց ընծա բերած Աւետարանում թողնում է մի հիշատակարան (Մկրտիչ Աղապնունի, Միաբանք և այցելութիւն Երուսաղեմի):

11.— Լեոն I-ի մահից հետո, թագավորական դահլ անցավ Ֆրանսիական ծագում ունեցող Լուսինյանների ձեռքը: Գվրդան Լուսինյանն անցնելով իշխանութիւն Վլովսը, աշխատում էր ընդառաջել պապի քաղաքականութեանը: Պապը հայերին օգնութիւն էր խոստանում, պայմանով, որ նրանք կաթողիկոսիւնն ընդունեն: Բայց ոչ պապը օգնեց, և ոչ էլ հայերը կաթողիկ դարձան: Հայ իշխանները տեսնելով, որ դրութիւնը ավելի է սրվում, սպանեցին Գվրդանին, որին հաջորդեց իշխան Կոստանդինը (1344—1363 թ. թ.): Կոստանդինն էլ շարունակում էր բանակցութիւններ վարել պապի հետ: Այս բանակցութիւնները հայերին ոչ միայն օգուտ չբերեցին, այլ ավելի վնասեցին նրանց: 1375 թվին մամլուկները գրավեցին Սիսը և

Լեոն VI-ին դերի տարան Եգիպտոս: Սրանից հետո լեոնային Կիլիկիայում կռիվները երկար շարունակվեցին: Բայց այդ կռիվները չէին կարող վերականգնել կործանված թագավորութիւնը:

Ակները վերջին անգամ հիշվում է 1386 թվին: Այդ թվին է, որ Ակներից Գրիգորը այցելում է Երուսաղեմ: Բայց թերևս մինչև այն ժամանակ արդեն քայքայվել էր վանքը: 1332 թվականից հետո այնտեղից չունենք ձեռագիր:

12.— Ակների դպրոցը խոշոր դեր է ունեցել հայկական ձեռագրերի ընդօրինակութեան և հայ մատենագրութիւնը լավագույն ստեղծագործութիւններով հարստացնելու ուղղութեամբ: Կարելի է ասել, որ եթե չլինեին Կիլիկիայի, Սյունյաց և գրչութեան մի քանի այլ կարևոր օջախներ, որոնց թվում և Ականց անապատը, և ընդօրինակվեին հին ձեռագրերը, ապա չէին ազատվի կորստից հին հայկական մեր մատենագրերից շատերը:

Բանաստեղծութեան վարպետ Ավետիք Խահակյանի մեր գրիչներին տված պատկերավոր բնութագրութիւնը հավասար չափով վերարբերվում է նաև Ակների անապատի բազմաշխատ գրիչներին.

«Մեր հոյակապ հին վանքերի մոպ

խուցերում, մենութեան մեջ,

Պատմիչները մեր վշտահար, մեղմ

կանթեղի լույսով անշեջ,

Մի նշխարով, մի կում ջրով և ճգնութեամբ

գիրքն անքուն,

Պատմութիւնը մեր գրեցին մագաղաթի

վրա դժգույն—

Նղենները, նախճիրները հորդանների

արշուրուշու,

Փլուզումը Հայրենիքի և ոսոխի սուրը

անկուշտ:

Նվ ուրացին լալահառաչ դժխեմ բախտը

Հայաստանի,

Նվ հուսացին արդարութեան խուլ Աստծու

դատաստանի»:

